











ԲԱՂԱԲԱԿԱՆ

ՎԵՐՋԱՊԵՍ...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ

Ամերիկայի նախագահական ընտրությունները արձանագրեցին անկիւնադարձային երեւոյթ մը: Ասիկա ընտրութիւններու մասնակից, տեմոքրատ կուսակցութեան նախագահութեան թեկնածուի նշանակման շուրջ 5 ամիսներու տեւող մրցակցութեան մը ետք: Արդարեւ, անցնող 5 ամիսներու ընթացքին, կուսակցութեան երկու կարեւոր թեկնածուներէն՝ նախկին նախագահ Պիլ Քլինթընի կինը՝ Հիլըրի Քլինթըն, մղեց խիստ աշխույժ, յոգնեցուցիչ եւ ծախսալից ընտրապայքար մը, յանգելու համար անցնող շաբթուայ ընթացքին, Օպամայի նշանակման իբրեւ կուսակցութեան թեկնածու նախագահական ընտրութեանց: Սոյն ընտրութիւնը ամէնուն կողմէ գնահատուեցաւ իբրեւ պատմական կարեւոր երեւոյթ, այսինքն մը, այս մեծ հանրապետութեան ամբողջ պատմութեան ընթացքին, սեւ թեկնածուի մը նշանակումը երկրի նախագահութեան: Ի հարկէ, ասկէ առաջ թեկնածուներ եղած են ընտրութեանց իջնող, սակայն Պարաք Օպաման առաջինն է որ ստանալով պատգամաւորներու մեծամասնութեան քուէները, շուրջ 2136 քուէ, պիտի նշանակուէր իր կուսակցութեան թեկնածուն: Ինչ կը վերաբերի իր մրցակից Հիլըրիին, որուն թեկնածութիւնը գրեթէ ապահով կը նկատուէր ընտրապայքարի սկզբնական շրջանին, վերիվայրումներով եւ քաղաքական որոշ սխալ հաշիւներով յատկանշուելէ ետք, ի վերջոյ պիտի պարտուէր պատգամաւորներու արձանագրուած քուէներու փոքր տարբերութեամբ: Այս՝ հակառակ այն իրողութեան որ ինքը, Հիլըրին պիտի ստանար շուրջ 18 միլիոն քուէարկողներու ձայներ, քանի մը հազար աւելի քան նոյնինքն Օպամային ձայները: Բայց քանի որ ընտրութիւնը կ'որոշուի պատգամաւորներու ձայներու մեծամասնութեամբ, Պարաք Օպամա կը դառնար յաղթական:

**ԻՆՉՊԷՍ ՊԱՏԱՀԵՑԱԻ ԱՅՍ ՅԱՂԹԱՆԱԿԸ**  
 Պէտք է խոստովանիլ որ բաւական լուրջ խոչընդոտներէ անցաւ Օպամայի պայքարը: Յատկապէս իր կենսագրականի որոշ մանրամասնութիւնները, այսինքն իր խառնածին հանգամանքը, - Քեն-

իացի հայր, եւ Քանասասի մայր, մանկութեան եւ պատանեկութեան շրջանի իր Ինտոնեզիան, Հավայի նախնական կրթութիւնները, սպիտակ մեծ ծնողքին հոգածութիւնը, իր միջին անունին «Հիւսէյնի» ճանցուիլը, մուսուլման-քրիստոնեայ շփոթը, - ասոնք որոշ «անպատեհութիւններ» նկատուեցան: Բացի ասոնցմէ, յատկապէս Շիքակոյի մէջ, իր պատկանելիութիւնը «Holy Trinity» կոչուած եկեղեցիէն ներս, որուն քարոզիչը, Վեր. Պենժամին Ռայթ, ցեղային (սեւ) թունդ քարոզի մը ընթացքին, պիտի խօսէր այս երկրին, Ամերիկային դէմ, զայն ամբաստանելով սեւատեացութեամբ, «էյտզ» ի մանրէ տարածելով, եւ այլ ժխտական արտայայտութիւններով: Պարաք Օպամա եւ իր ընտանիքը շուրջ 20 տարիներ սերտորէն առնչուած էին այս պատուելիին հետ, եւ Օպամա լրջօրէն քննադատուեցաւ անոր հետ մտերմութեան եւ հանդուրժողութեան համար: Ապա, երբ պատուելին փոխարինեց մէկ ուրիշ, այս անգամ կաթոլիկ քարոզիչ մը, որ, նոյնպէս, պայթուցիկ քարոզ մը տուաւ Հիլըրիին դէմ, կարծես բաժակը չորդած էր, եւ Օպամա ստիպուեցաւ հրաժարիլ այդ եկեղեցու իր անդամկցութենէն: Միշտ Օպամա, Պարաքի տիկինը, առիթով մը պիտի յայտարարէր թէ առաջին անգամ է որ ինք «հպարտ կը զգար ամերիկացի ըլլալուն համար», յայտարարութիւն մը որ ժխտական նկատուեցաւ: Ապա, Պարաք Օպամա որոշ փոփոխութիւններ կ'առաջարկէր Ամերիկայի արտաքին քաղաքականութեան մէջ, յատկապէս Իրաքի պատերազմի, Իրանի, Վենեզուելայի հետ առնչուող իր ելոյթները «ժխտական» նկատուեցան: Նաեւ իր երիտասարդ ըլլալու հանգամանքը, «անփորձութիւնը», եւ Շիքակոյի մէջ իր ունեցած «քննադատելի բարեկամութիւնները», պիտի նսմաններու, եւ ծայրայեղ քաղաքական անձնաւորութեանց հետ, ուրեմն այս բոլորը իրեն դէմ պիտի աշխատէին:

Այս «ժխտականներու» դիմաց Օպաման իր ընտրարշաւին գլխաւոր թեման նկատեց երկրէն ներս փոփոխութեան անհրաժեշտութիւնը, թէ Ուաշինկթընի մէջ, եւ թէ ալ երկրի առողջապահական, կրթական, արտաքին քաղաքական եւ այլ մարզերէն ներս, եւ այս բոլորը մեծ ճարտասանութեամբ,

ժողովուրդի յատկապէս ուսեալ եւ երիտասարդ տարրերու մօտ ստեղծեցին իրեն նպաստաւոր մթնոլորտ մը, որ յանգեցաւ նիւթական մեծ ներդրումներու, շուրջ 250 միլիոն տոլարի համտոյ, եւ նաեւ ընտրական ճարպիկ գործակիցներով, Պարաք Օպամային ապահովեցին իր յաղթանակը:



**ՀԻՄԱ ԻՆՉ**  
 Պարաք Օպամային կ'ակնկալուի արագաբար շարքերը հաւաքել տեմոքրատ կուսակցութենէն ներս, մանաւանդ որ իր մրցակիցն ալ, հակառակ որոշ տնտեսագումի, իրեն յաջողութիւն մաղթեց, եւ պատրաստուել ձոն Մքքէյնի դէմ լուրջ ընտրապայքարի, մանաւանդ որ այս վերջինը բաւական ճամբայ կտրած է արդէն: Կը խօսուի բազմաթիւ ընտրապայքարային հանդիպումներու մասին, Օպամայի եւ Մքքէյնի միջեւ, որոնք «հանրային սրահ» (Town Hall) հանգամանք կրնան ունենալ, այսինքն փոխանակ հարց-պատասխանի, առանձին երկարատեւ ելոյթներու, իւրաքանչիւրը իր քաղաքական թէգերը պաշտպանող: Տակաւին Օպամա պէտք է նշանակէ իր փոխ-նախագահի թեկնածուն, որուն կը միտի իր մրցակիցը, Հիլըրին: Այս վերջինին նշանակումը ունի իր առաւելութիւններն ու անպատեհութիւնները, որոնց շատ հաւանօրէն ինք լաւատեղեակ է:

Վերջացնելու համար այս քրոնիկը Պարաք Օպամայի մասին, ինծի համար քիչ մը զարմանալի եւ քննադատելի թուեցաւ Պարաք Օպամայի ճառը, հրէական համագումարի ընթացքին, ուր ելոյթներ ունեցան թէ Մքքէյնը, թէ Օպամա եւ թէ Քլինթընը: Երեքն ալ Ամերիկայի անվերապահ եւ չաւիտեանական աջակցութիւնը խոստացան իսրայէլի պետութեան, եւ հրեաներուն: Միակ տարբերութիւնը Օպամայի պարագային, այն էր որ ինք կ'արտայայտուէր թէ իսրայէլի եւ թէ Պաղեստինի երկու երկիրներու խաղաղ գործակցութեան մասին, առանց ճշդելու թէ ինչպէս պիտի իրականանար մանաւանդ Պաղեստինեան երկիրը...  
 Գալիք ամիսները, մինչեւ Նոյեմբեր 4-ի ընտրութիւնը լոյս ամիսներ են, եւ նորութիւններ սպասող: Ոչ միայն Ամերիկան, այլ ամբողջ աշխարհ հեւիհեւ պիտի հետեւի տեղի ունենալիք ընտրական պայքարին, որմէ յաղթական կրնայ լլլել սեւամորթ Պարաք Օպաման...

**ՈՉ ԵՒՍ Է ԸՆԿԵՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԲԱՐՏԵԱՆ**

Խոր ցաւով իմացանք մեր երէց ընկերներէն Յարութիւն Աբարտեանի մահը, որ պատահած է Մոնրէյալի մէջ (Գանատա):  
 Հանգուցեալը կանուխ տարիքէն եղած է անդամ Սոց. Դեմ. Հնչակեան կուսակցութեան եւ վարած պատասխանատու պաշտօններ: Ան երկար տարիներ եղած է Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութեան անդամ եւ հիմնադիր անդամներէն ՆՍՄՄ-ի «Արտաւազը» թատերախումբին:  
 Յարութիւն Աբարտեան Մոնրէյալի մէջ հիմնադիրներէն էր տեղւոյն Նոր Սերունդ Մշակութային Միութեան մասնաճիւղին եւ ակումբին:  
 Գաղափարաւոր էր եւ հաւատաւոր կուսակցականի մահուան տխուր առիթով մեր խորագրաց ցաւակցութիւնները հանգուցեալի այրիին, զաւակներուն, եղբայրներուն, քրոջ եւ ընտանեկան համայն պարագաներուն:  
 Ս.Գ.Հ.Կ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆ

1975-2008  
**33<sup>th</sup> ANNIVERSARY**  
 Life, Health, Group Health, Disability, Long Term Care  
**NEW YORK LIFE**

**ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆԻՐԱԺԵՇՏ Է**  
 ԵՐԲԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

**ՊԵՏՐՈՍ ԵՒ ՍԻԱՍԱՆԹՈ ՄԱՐՈՆԵԱՆ**

818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205  
 E-mail: BMaronian@AOL.com ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"

# ՓԱՂՈՒԹԱՅԻՆ

## ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ ՄԵԾ ԾՆՈՂՆԵՐՈՒ ՕՐ

Հայ Քոյրերու Վարժարանը, այս տարի առաջին անգամ ըլլալով, ձեռնարկեց «Մեծ Ծնողներու Օր» ծրագրին: Աշակերտներու մեծ հայրերն ու մեծ մայրերը, օր մը վարժարանէն ներս հիւրընկալելու, անոնց առիթ ընծայելով իրենց թոռներուն հետ դպրոցական օր մը անցնելու եւ վայելելու իրենց շատ սիրած սրտահաստներու սորված պարերը, երգերը, արտասանութիւններն ու ներկայացումները:

Ուրախութիւնը արեւի նման պայծառացուց անոնց աչքերը, երբ մանկացած, ինքնամոռաց անոնք պատիկ թաթիկները բռնած իրենց թոռներուն՝ ուղղուեցան դասարանները, պահ մըն ալ դասարաններու մէջ զիրենք վայելելու եւ տարիներու ծանր լուծը թօթափած իրենց ժպիտը խառնելու այդ անմեղ ժպիտներուն... իրաւունք ունիք մեծ հայրեր եւ մեծ մայրեր պատիւը ձեռն էր այդ օր, արժանի էք պատուի, արժանի էք



Մանկապարտէզի փոքրիկներ իրենց մեծ ծնողներուն հետ մարմնագոյն դասարան

Ինչպէս որ գեղեցիկ էր գաղափարը, նոյնպէս ալ գեղեցիկօրէն գործադրուեցաւ: Հինշաբթի, Մայիս 28ի առաւօտեան 8:30էն մինչեւ կէսօր շարունակուող յայտագիրը ունէր երկու բաժիններ, առաջին բաժնով ներկայ եղան Մանկապարտէզի մեծ մայրերն ու մեծ հայրերը, հաճոյքով վայելեցին իրեն թոռներու երգերը, արտասանութիւնները, մանաւանդ, տակաւին առաջին տարին յաճախող մատղայ մանուկներու թոթովոյ շրթներէն լսուող Մայրենի բարբառը երանութեամբ լեցուց, օտար ամերուն կայք հաստատած, բաց միշտ հայրենի հողի կարօտով, հայրենիքի տենչով ապրող մեծ հայրերուն եւ մայրերուն հոգիները:

յարգանքի...  
Յաջորդ բաժինը, որ տրամադրուած էր նախակրթարանի եւ միջնակարգի մեծ ծնողաց, սկսաւ 10:30ին եւ չաւարտեց որոշուած ժամուն՝ 12ին, այլ շարունակուեցաւ եւ դարձաւ իսկական հայկական փառատուն: Երաժշտութիւն, երգ, պար, նուագ, ասմունք, ներկայացում, ամէն տեսակ արուեստի գործեր կային եւ մեծ բծախնդրութեամբ ու սիրով կը մատուցուէին մեծ ծնողներուն. կարծես անոնց աչքերու մէջէն շողացող երջանկութիւնը մակնիսացուցած էր անոնց թոռները որոնք ի յայտ կը բերէին իրենց ձիւքերը գերազանցելով զիրար:



Հինգերորդ եւ վեցերորդ դասարանի աշակերտներ երգով ու ասմունքով կը պանծացնեն եռագոյն դրօշը

Հանդիսութեան բացման, հանդիսավար՝ վարժարանի բարձրագոյն դասարաններու հայերէն լեզուի դասատու՝ Տիկ. Լինտա Գանտիլեան եւ Օր. Մարի Թիւթեանի, որոնք շատ կարճ ժամանակամիջոցի մէջ կրցան աշակերտներուն սորվեցնել Մայրերու օրուան եւ Մայիսեան յաղթանակներու վերաբերեալ ամէն տեսակի երգեր, ոտանաւորներ եւ ներկայացումներ, այս բոլորը իր լրումին կը համաէր 2-3-4րդ դասարանի աղջիկներու պարախումբով, իր պարուստցով յանձինս՝ Տիկ. Գաթրին Հայրապետեանի, որ սիրալոյսով լրիւ տարեշրջանը իր ժամանակը կը տրամադրէ մեր մատուցող աղջնակներու հոգիներուն մէջ դրոշմելով հայ պարարուեստի սէրը, արդար է որ յիշենք մեր դպրոցի թմբկահար տղաքը եւ բոլոր երաժշտական գործիքներ նուագող խումբը, որոնք երգչախումբի տեւողութեան կ'ընկերակցէին յաւելեալ աշխուժութիւն եւ եռանդ ստեղծելով հանդիսութեան, արցունք, ժպիտ ու ծափողոյցներ խլելով մեծ ծնողներէն:

Պարտասարանի, հայկական բաժանմունքի դասատուներուն՝ Տիկ. Մարի Գոյումեան, Տիկ. Լինտա Գանտիլեան եւ Օր. Մարի Թիւթեանի, որոնք շատ կարճ ժամանակամիջոցի մէջ կրցան աշակերտներուն սորվեցնել Մայրերու օրուան եւ Մայիսեան յաղթանակներու վերաբերեալ ամէն տեսակի երգեր, ոտանաւորներ եւ ներկայացումներ, այս բոլորը իր լրումին կը համաէր 2-3-4րդ դասարանի աղջիկներու պարախումբով, իր պարուստցով յանձինս՝ Տիկ. Գաթրին Հայրապետեանի, որ սիրալոյսով լրիւ տարեշրջանը իր ժամանակը կը տրամադրէ մեր մատուցող աղջնակներու հոգիներուն մէջ դրոշմելով հայ պարարուեստի սէրը, արդար է որ յիշենք մեր դպրոցի թմբկահար տղաքը եւ բոլոր երաժշտական գործիքներ նուագող խումբը, որոնք երգչախումբի տեւողութեան կ'ընկերակցէին յաւելեալ աշխուժութիւն եւ եռանդ ստեղծելով հանդիսութեան, արցունք, ժպիտ ու ծափողոյցներ խլելով մեծ ծնողներէն:

Հանդիսավար Տիկ. Լինտայի օրուան պատշաճ մէջբերումն երով, շարունակուեցաւ յայտագիրը գոյգ թեմաներով Մայրութիւն եւ Հայրենիք, երկուքն ալ իրենց մէջ կ'ամփոփէին սէր, գոհողութիւն, նուիրում, պատկանելիութիւն...: Եւ այդ օր բոլոր գաղափարախօսութիւնները վերածուեցան երգ երաժշտութեան, զիր գրականութեան ու պարի, պապ միացուելով որպէս բուրումնաւէտ ծաղկեփունջ՝ նուիրուեցաւ մեծ հայրերուն եւ մայրերուն, անոնց ապրեցնելով անմոռանալի եւ յիշարժան օր մը:

Հինգշաբթի, Մայիս 28, 2008ը անմոռանալի պիտի մնայ Հայ Քոյրերու Վարժարանի համար: Նաեւ, յիշատակելի օր մը պիտի ըլլայ հայ քոյրերու վարժարանի աշակերտներուն եւ ծնողներուն համար, որոնք 90 տարիներ փառաւոր յաղթանակի հպարտութիւնը, այդ օր անգամ մը եւս ամրապնդեցին իրենց հոգիներուն մէջ՝ ի տես եռագոյն դրօշի ներքեւ իրենց թոռներու հայրենաշունչ ելոյթներուն, ներկայացումներուն ու պարերուն:

Շնորհակալութիւն բոլոր ներկայ եղող մեծ հայրերուն եւ մեծ մայրերուն, բոլոր նուիրատուներուն, յայտագրի մաս կազմող բոլոր աշակերտներուն եւ յայտագրի իրականացման իրենց բաժինը բերողներուն:

Յատուկ շնորհակալութիւն օրուան հիւրասիրութիւնը ստանցձնող ութերորդ դասարանի ծնողներուն, որոնք պատշաճ հիւրասրութեամբ՝ կատարելագործեցին օրուան հանդիսութիւնը:

Յաջորդ տարի կրկին հանդիպելու յոյսով...

### ՎԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ - ԹԻՒ 1

Ինչպէս տեղեակ է շրջանիս հայ համայնքը, «Քաջ Նազար» ամսագիրը եւ հեռուստաժամը 2007 թուի Դեկտեմբերին, Սուրբ Ծննդեան եւ Նոր Տարուայ տօներու առթիւ կազմակերպեց ճրգ տարի շարունակուող Թեթիթոն/դրամահաւաք՝ տօնական հանդէսներ կազմակերպելու եւ նուէրներ բաշխելու Հայաստանի ծնողագուրկ եւ հաշմանդամ երեխաներին եւ «Խարբերդ» մանկատան երեք յարկերի վերանորոգման համար: Բերկրանքով եւ ուրախութեամբ սրանով առ ի գիտութիւն հայ ժողովրդին, ի մասնաւորի նուիրատուներին յայտնում ենք, որ Յունիս 1, 2008 թ. Արարատի մարզի Խարբերդ գիւղի «Խարբերդ» հաշմանդամ եւ ծնողագուրկ երեխաների կեդրոնի շինարարութեան պայմանագիրը պաշտօնացուած, սկսել է վերանորոգումը, վարպետ շինարար Նորիկ Մելքոնեանի ղեկավարութեամբ, եւ նոյն հիմնարկի տնօրէն Յարութիւն բալասանեանի անմիջական հսկողութեան ներքոյ:

Վերանորոգման համար պայմանագրով նախատեսուած 70 հազար ամերիկեան տոլարի 40 հազարը ուղարկուած է արդէն, իսկ 30 հազարը կը վճարուի աշխատանքների աւարտից յետոյ:

Այդ կապակցութեամբ նրանք, որոնք ցանկանում են յաւելեալ տեղեկութիւններ ստանալ «Խարբերդ» մանկատան շինարարական աշխատանքների մասին, կարող են հեռաձայնել ուղղակի տնօրէն Պրն. Բալասանեանին 28-01-25 հեռախօսահամարով:

Հայաստանի ծնողագուրկ եւ հաշմանդամ երեխաների օգնութեան Հիմնադրամի տնօրէն Յովհաննէս Բալասանը, մէկ անգամ եւս իր խորին շնորհակալութիւններն է յայտնում բոլոր նուիրատուներին, որոնք իրենց սրտաբուխ մասնակցութեամբ հնարաւորութիւն ստեղծեցին հիմնական եւ արդիական վերանորոգումներ կատարել «Խարբերդ» մանկատանում, որի երեք յարկերում ապրում եւ խնամուած են կեանքի բոլոր հաճոյքներից զրկուած մեր սիրասուն բալիկները:

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԱԼԱՅԵԱՆ**  
Հայաստանի Ծնողագուրկ եւ Հաշմանդամ երեխաների Օգնութեան Հիմնադրամի Նախագահ  
Յունիս 5, 2008

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՁ (200 ԸՈԳԻ ՎԱՍԱՐ)**

**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՎԱՍԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA**  
**ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680**

ՐԱՅԱՍՏԱՆ

ՆՈՐ ԱՅՆԹԱՊ ԱԲԱՆԻ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒՄԸ

ԴՈՎՏ. ԳԷՈՐԳ ԽՐԼՈՊԵԱՆ

Հայրենիք սփիւռք յարաբե-  
րութիւնների խորացման, հայրե-  
նադարձութեան ընթացքի ծաւալ-  
ման, հայ պահանջատիրութեան  
գիտակցութեան ու ժողովրդի մի-  
գակեցումը եւ Յեղասպանութեան 50-  
ամեակից յետոյ խորհրդային Հա-  
յաստանում արմատաւորուեց պատ-  
մական Հայաստանի ու Հայկական  
Կիլիկիայի բնակավայրերի անուկ-  
ներով բնակավայրեր հիմնադրելու  
սովորութիւնը: Ինչպէս համանման  
այլ հարցերում, այս դէպքում եւս  
լուրջապէս ու ծածկուած ձեւով մի-  
աձուլում են երկու միտումներ՝ մի-  
կողմից սփիւռքից նիւթական մի-  
ջոցներ եւ գաղափարական-քաղա-  
քական լծակներ ձեռք բերելու  
պաշտօնական բոլշեւիկեան ցան-  
կութիւնը եւ, միւս կողմից՝ հայրե-  
նասէր հայութեան ակնկալութիւն-  
ները (չմոռանալ բռնագրաւուած  
բնօրրանը, վառ պահել պահանջա-  
տիրական գիտակցութիւնը, հայ-  
րենասիրական ոգով դաստիարա-  
կել նոր սերունդը, շեշտել ցեղաս-  
պանութեան իրողութիւնը, եւ կեն-  
դանի պահել հայ ազատագրական  
պայքարի ոգին):

Այսպիսով, ժամանակի ըն-  
թացքում խորհրդային Հայաստա-  
նում կեանք առան Նոր Արաբկիր,  
Նոր Արմաւիր, Նոր Այնթապ, Նոր  
Բալու, Նոր Գեղի, Նոր Երզնկա,  
Զէյթուն, Նոր Թամարզա, Նոր  
Խարբերդ, Նոր Կեսարիա, Կիլիկ-  
իա, Նոր Հաճն, Նոր Մալաթիա,  
Մարաշ, Մուսաբլու, Նոր Սեբաստ-  
իա եւ այլ բնակավայրեր:

Հայաստանաբնակ այնթապցի  
որոշ մտաւորականների եւ սփիւռ-  
քի Այնթապի հայրենակցական միու-  
թիւնների ղեկավարների հանդի-  
պումներից ծնուած է Երեւանում  
Այնթապի հայրենակցական միու-  
թիւն ստեղծելու գաղափարը: Այդ  
մասին Սփիւռքահայութեան հետ  
մշակութային կապի կոմիտէին նախ  
հաղորդեցին սփիւռքահայերը, ապա  
հայրենաբնակները: Պարզուեց, որ  
Այնթապի մասին կոմիտէի ղեկա-  
վարութեան տեղեկութիւնները այն-  
քան էլ հարուստ ու հաւաստի չեն:  
Անհրաժեշտ եղաւ յաղթահարել որոշ  
անհատների տուած ապակողմնո-  
րոշիչ տեղեկութիւնները այն մա-  
սին, որ Այնթապի հերոսամարտի  
զինուորական ղեկավար Ատուր Լե-  
ւոնեանը անգլիական հետախու-  
զութեան սպայ է, որ այնթապցի-  
ները մեծամասամբ դուրս են «Հա-

յաստանեան» ճակատից: Շատ շու-  
տով համատեղ աշխատանքի ըն-  
թացքում վերագարթեց Այնթապի  
հերոսամարտի միասնութեան եւ  
հայրենասիրութեան ոգին: Սփիւռ-  
քահայ այնթապցիները, անկախ  
իրենց դաւանական ու կուսակցա-  
կան պատկանելիութիւնից իրենց  
բարոյական ու նիւթական լուծման  
ներդրին Նոր Այնթապի ստեղծման  
ու այդ աւանում գործարանի կա-  
ռուցման գործում: Շուտով Հայաս-  
տանի պատմական թանգարանում  
իր տեղը գրաւեցին Այնթապի հերո-

րութեան ու գործունէութեան ծա-  
նօթացումը մեծապէս նպաստեց աշ-  
խարհասփիւռ այնթապցիների մա-  
սին դրական կարծիքի կերտման:  
Անհրաժեշտ եղաւ նաեւ պայ-  
քարել այն տեսակետի դէմ, որ  
խորհրդային Հայաստանում ան-  
թոյլատրելիօրէն շատանում են  
թուրքիայում գտնուող հայաբնակ  
բնակավայրերի վերանուանումներն  
ու այդ վայրերի բնակիչների ազա-  
տագրական պայքարի ու այդ  
պայքարում հերոսաբար զոհուած-  
ների յուշարձանները:



սամարտի ղեկավար Ատուր Լեւոն-  
եանի սուրը, մեղալներն ու այլ  
իրերը:

Նորին Սուրբ Օծութիւն Մեծի  
Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Տ.Տ.  
Բաբգէն Կիլիկեանի, Բաբգէն  
Սրբազան Ապատեանի (Հարաւա-  
յին Ամերիկայի Նորին Սուրբ Օծու-  
թիւն Վազգէն Ա. Ամենայն Հայոց  
Կաթողիկոսի պատուիրակ), Տիրան  
Արքեպիսկոպոս Երեստեանի, Վեր.  
Տիգրան Խրլոպեանի, Աւետիս Գա-  
լմբեարեանի, Դոկտ. Գէորգ Սա-  
րաֆեանի, Սարգիս Պալապանեանի  
(Պալապան խոճա), Լեւոն Լեւոնեա-  
նի (Թ. Լեւոն), Գէորգ Պարտազճ-  
եանի (Ֆրանսա), Գրիգոր Պողար-  
եանի (Լիբանան), Տիգրան Միւ-  
րաքեանի (Արժենթին), Կարապետ  
Սիւլահեանի (ԱՄՆ), Արմէն Յա-  
րութիւնեանի (Պէյրութ), Լեւոն  
Վարդանի (Լիբանան), Բժիշկ Ռո-  
պերտ Ճեպեճեանի (Սուրիա), Գէ-  
որգ Մոմճեանի (ԱՄՆ) եւ այլ  
այնթապցի երեւելիների կենսագ-

Փոստուցին նաեւ անհատներ,  
որոնք պնդեցին թէ սփիւռքահայ  
նոր սերունդին չի հրապուրի արդի  
Թուրքիայում գտնուող եւ անցեա-  
լում եղած հայաշատ քաղաքների  
պատմութիւնը, անցեալով ապրե-  
լու միտումը: Կեանքը հերքեց նման  
հարցադրումը: Ուրիշներ գտան,  
որ աւելի ճիշդ կը լինի «կորս-  
ուած» ամէն մի հայ բնակավայրի  
անունը Հայաստանում վերակեն-  
դանացնելու եւ այնտեղ փոքր  
գործարաններ կառուցելու փոխա-  
րէն միջոցները միացնել ու հայ-  
րենիքում մեծ ձեռնարկութիւններ  
հաստատել: Նրանք հայրենակցա-  
կան միութիւնների մօտեցումը նկա-  
տեցին որպէս միջոցների անի-  
մատ փոշիացում եւ խոտոր հա-  
մընդհանուր, համազգային, համա-  
հայկական մտածողութեան ու  
ծրագրերի ծաւալման:

Նման արգելակներ յաղթահա-  
րել են նաեւ միւս հայրենակցական  
միութիւնները, որոնք ձգտել են

իրենց բնօրրանի անունը յաւեր-  
ժացնել հայրենիքում ու այնտեղ  
կառուցել յուշակոթողներ:

Կոմիտէի համաձայնութիւնը  
ստանալուց յետոյ կազմուեց վար-  
չութիւն հետեւեալ կազմով՝ Ատե-  
նապետ, Արթուր Հատիտեան («էջմ-  
իածին» ամսագրի խմբագիր), Փոխ  
Ատենապետ, Դոկտ. Գէորգ Խրլոպ-  
եան (Երեւանի Համալսարանի պրո-  
ֆեսոր), Ատենադպիր, Եղիա Տոյ-  
պակեան (Վաստակաշատ մանկա-  
վարժ, գրող), խորհրդականներ՝  
Գիտ. Թեկնածու Ալպերդ Աղաճա-  
նուկեան (Պոլիտեխնիկ ինստիտու-  
տի դոցենտ), Մեսրոպ Մեսրոպեան  
(խմբավար, Մանկավարժական ինս-  
տիտուտի Դոցենտ), Բժիշկ Խաչիկ  
Սիւլահեան, Ենովք Կրպոյցեան  
(ատամնատեխնիկ), Լեւոն Գարա-  
մանուկեան (Երեւանի Քաղաքացի  
ճարտարապետական բաժնի ինժի-  
ներ), Անդրանիկ Դէմիրճեան (ին-  
ժիներ), Ճօրճ Կարապետեան (վար-  
չութեան սիրելի հայրիկը, Պաղես-  
տինի կոմկուսի վետերան), Ներսէս  
եւ Վահան Նալբանդեան եղբայրներ  
(Ղեկավար աշխատողների դերձա-  
կատան աւագ վարպետներ), Աւետիս  
Փոստաճեան (Կաթողիկոսարանի  
«Հայկաչէն» ամսուանոցի տեսուչ):

Վարչութեան անդրանիկ նիս-  
տը տեղի ունեցաւ Տոյպակեանների  
տանը: Այնտեղ որոշուեց նախ հայ-  
ցել Ամէնայն Հայոց Կաթողիկոս  
Նորին Սուրբ Օծութիւն ՏՏ Վազգէն  
Ա. ի օրհնութիւնը: Վեհափառ Հայ-  
րը ոչ միայն ընդառաջեց, այլ նաեւ  
ներկայ գտնուեց Հայաստանի ԱՀՄ  
գրեթէ բոլոր հաւաքներին: Նորին  
Սուրբ Օծութեան հետ էր լինում նաեւ  
Լուսինէ Զաքարեանը, որը ոգեշնչում  
էր ներկաներին իր երգերով:

Այնթապցիական այդ հաւաք-  
ները կազմակերպուած էին Այնթա-  
պի հերոսամարտի տարելիցներին,  
Հայաստան ժամանած արտերկի  
այնթապցի մտաւորականներին ու  
ակնաւոր գործիչներին պատուե-  
լու համար: Մեծ շուքով նշուեցին  
Թագազիւղ աւանի Նոր Այնթապ  
անուանակոչութիւնը, Նոր Այնթա-  
պի գործարանի բացումը, վաստա-  
կաշատ մանկավարժ եւ հասարա-  
կական գործիչ Գրիգոր Պողարեա-  
նի յոբելեանը, սուրիական բանակի  
պաշտօնաթող զենեթալ, իրաւաբա-  
նական գիտութիւնների դոկտոր  
Արամ Գարամանուկեանի յարգան-  
քի երեկոն, Տիգրան Միւրաքեանի  
հրաւերով Հայ-արժենթիւնեան բա-

Շարք էջ 16



## Political Repressions In Armenia Are Continuing Ter-Petrosian Rejects Parliament Probe Of Post-Election Clashes

YEREVAN -- Police in Yerevan tracked down and arrested on Tuesday a longtime associate of opposition leader Levon Ter-Petrosian who has been on the run since the launch of the Armenian government's post-election crackdown on the opposition.

Samvel Gevorgian ran one of Ter-Petrosian's regional campaign offices during the February 19 presidential election and is better known as one of the leaders of the 1988 movement for Nagorno-Karabakh's unification with Armenia.

A spokesman for Ter-Petrosian condemned his arrest as a "classical example of political persecution." "Political repressions in Armenia are continuing," Arman Musinian told RFE/RL. "With Samvel Gevorgian's arrest, the number of political prisoners in Armenia has increased," he said, referring to several dozen opposition members arrested as part of the crackdown.

### Ter-Petrosian Rejects Parliament Probe

Opposition leader Levon Ter-Petrosian shrugged off through a senior aide on Wednesday the impending launch of a supposedly independent parliamentary investigation into the deadly clashes between his supporters and security

forces that followed Armenia's disputed presidential election.

The conduct of an "independent, transparent and credible inquiry" was one of the key demands addressed to the Armenian authorities by the Council of Europe Parliamentary Assembly (PACE) in a resolution adopted last April. The European Union and the United States have also stressed the need to establish all circumstances of the March 1 violence in Yerevan that left at least ten people dead and more than 100 others injured.

The authorities have responded to the Western pressure by proposing that such an inquiry be conducted by an ad hoc commission of the National Assembly. The parliament began debating on Tuesday a relevant bill drawn up by veteran lawmaker Victor Dallakian. It is expected to be passed in time for the upcoming PACE session in Strasbourg.

The commission will comprise two representatives of each of the four parliamentary parties as well as an independent deputy, presumably Dallakian. With only one of those parties, Zharangutyun, being in opposition to the government, at least eight of its 11 members will be government loyalists.

The bill also envisages that the

Ter-Petrosian-led opposition and other political groups not represented in the National Assembly will be able to name representatives to the commission. Those representatives will not have voting rights, however. According to Dallakian, international forensic experts will also be invited to take part in the commission's work.

A leading member of Ter-Petrosian's Popular Movement alliance, Levon Zurabian, made clear that the former Armenian president and his opposition allies can not trust a body dominated by government loyalists. "They are setting up a commission most of whose members will represent parties bearing moral responsibility for the March 1 slaughter," Zurabian told RFE/RL. "That commission will always be able to make decisions beneficial for the authorities."

"The main mission of the commission is to cover up crimes committed by the prosecutor's office and the police," charged Suren Sureniants, a leader of the pro-Ter-Petrosian Hanrapetutyun party.

Zurabian said Ter-Petrosian will agree to join the planned inquiry only if his opposition alliance and the govern-

Continued on page 2

## Leading Experts On Holocaust And Genocide Sign A Petition To Swedish Parliament

A petition published in 10 languages is addressed to the members of the Swedish Parliament in order to persuade the Foreign Affairs's Commission of the Parliament to allow the recognition of Armenian Genocide of 1915.

An extract of this text indicates: "Today, Sweden is internationally regarded as a champion of human rights. It is incumbent on the Swedish authorities to live up to this reputation and to reject any compromise with negationism and denial. The Swedish Government should attempt to assist Turkey to become a better democracy by facing its history and acknowledging the truth, not by continuing to stagger in the darkness of self-deception and pretense. Today, the data and information about the Genocide of Armenians, Assyrians and Pontic Greeks are so extensive that no serious politician can honestly cite insufficient or inconclusive research as an excuse to avoid recognition. Refusal to recognize established fact based on qualitative and quantitative research may be regarded as being tantamount to denial."

## Jailed Opposition Leader Defiant

### Aleksandr Arzumanian: "This Is Fabricated Accusation Resulting From A Political Order"

YEREVAN -- Aleksandr Arzumanian former Foreign Minister of Armenia and a close associate of President Levon Ter-Petrosian arrested following the post-election clashes in Yerevan struck a defiant note Friday as he spoke to RFE/RL in a maximum security prison where he is being kept along with other prominent opposition figures.

Arzumanian, who managed Ter-Petrosian's presidential election campaign, insisted that grave accusations brought against him were trumped up for political reasons. He also said that the Armenian authorities can not be serious about their stated readiness to engage in a dialogue with the opposition as long as he and dozens of other oppositionists remain in jail.

Like many of the detainees, Arzumanian was charged with organizing "mass disturbances" and attempting to "usurp power" in the wake of the February 19 presidential election. The charges stem from the March 1 deadly clashes between security forces and thousands of Ter-Petrosian supporters demanding a re-run of rigged vote.

"I stated right from the beginning that this is a fabricated accusation resulting from a political order by the authorities," Arzumanian told RFE/RL



Aleksandr Arzumanian

in the basement jail of Armenia's National Security Service (NSS). "I am persecuted for my political views and that is why I refuse to give testimony or participate in any other investigative activity."

"This case is a bubble. There is not a single fact to substantiate the accusations. They are holding us hostage here until they see what happens next," he said, adding that government "repressions" will not force the Ter-Petrosian-led opposition into submission.

Arzumanian, who had served as Foreign Minister in 1996-1998, backed the ex-president's position. "You can't hold people hostage, ban any public gathering, persecute people and at the same time talk about dialogue," he said. "All this is illegal. This illegalities must end before we can feel that the authorities want to effect any changes."

## Armenia's Ombudsman Defends His Report

YEREVAN -- Armenia's Ombudsman insisted this week that he acted within the powers vested in him by the country's legislation when he raised questions over the March 1 melee in his ad hoc report in late April.


Armen Harutyunyan said speaking during parliamentary hearings last Thursday that accusations from law-enforcement bodies that he had stretched his authority by issuing a "political" report were not legitimate.

Harutyunyan published his 68-page ad hoc report on the February 19 presidential election and the post-election developments in Armenia on April 25. The report also contained criticism of the authorities, which caused objections from the Prosecutor-General's Office and the Ministry of Justice.

The Parliamentary Commission on European Integration Affairs had decided to hold hearings on the Ombudsman's report, inviting all parties concerned.

Harutyunyan insisted in parliament that the arguments contained in the objections of the Prosecutor-General and the Justice Minister are presented out of context and are distorted: "In their reports they even reply to non-existing questions. The impression is that the text of my report is fitted to criticism, and the objections are made in the best traditions of the Soviet times."

Moreover, according to Harutyunyan, there is no precedent in



Armenia's Ombudsman  
Armen Harutyunyan

any country that an ombudsman is subjected to such aggressive attacks.

Prosecutor-General Aghvan Hovsepian retorted: "There is no precedent either that an ombudsman makes a political statement."

"You pursued other goals and not the goal of receiving answers to questions that you raised," Hovsepian charged from the parliament's tribune, without elaborating.

Hovsepian's arguments receiving backing from Justice Minister Gevorg Danielyan, who also described the ombudsman's ad hoc report as "political" and said that the problems reflected in it "cannot become a subject for discussion."

And Harutyunyan said that an-

Continued on page 2

## Zhirayr Sefilian Released From Jail

Zhirayr Sefilian, a Lebanese citizen of Armenian descent, was freed on Monday after serving a controversial 18-month prison sentence. A prominent veteran of the Nagorno-Karabakh He pledged to continue to fight for regime change despite facing the possibility of deportation from the country.

Sefilian and another war veteran, Vartan Malkhasian, had been arrested and charged with calling for a violent overthrow of the government in December 2006 just days after setting up a new pressure group opposed to Armenian territorial concessions to Azerbaijan. A Yerevan court found Malkhasian guilty on that count and sentenced him to two years in prison in August 2007. The court cleared Sefilian of the charge but still jailed him for 18 months for illegally possessing a pistol which he had received as a gift from a former commander of the Karabakh Armenian army.

Sefilian and Malkhasian deny the accusations as politically motivated. They both endorsed former President Levon Ter-Petrosian in Armenia's recent presidential election despite his conciliatory line on the Nagorno-Karabakh conflict.

Sefilian was greeted by more than a dozen friends and supporters as he left the Vartashen prison in Yerevan early in the morning. "First of all, I want to thank journalists who have spread our word to the people to the dismay of the authorities for the past one and a half years," he said. "I'm optimistic. Everything will be alright."

"Whether [the authorities] keep us in jail for two or twenty years, nothing will change, as far as we are concerned. Let them think about them-



Zhirayr Sefilian

selves."

"We will soon clear our country of those scoundrels," Sefilian told journalists before heading to the Yerablur military where more than a dozen fellow veterans are on hunger strike to demand the release of scores of other Ter-Petrosian arrested in the government's post-election crackdown on the opposition.

The authorities indicated last month their intention to expel Sefilian to Lebanon after he is set free. The Armenian police filed a relevant lawsuit to Armenia's Administrative Court on the grounds that his residency permit has expired. The court refused to consider the application on a technicality on May 27. The police have not filed a fresh suit yet.

Sefilian called the deportation attempt as a "disgrace" and condemned the authorities for refusing to grant him Armenian citizenship. "I don't know if there is any other precedent of a military commander of a particular state not having its citizenship," he said.

## Ex-Speaker Hastert Joins A Lobby Firm Representing Turkey

WASHINGTON, DC -- While former Congressman Bob Livingston recently lost his lucrative deal with Turkey to DLA Piper, his colleague, former Speaker Hastert has joined Dickstein Shapiro, a law/lobby firm in Washington, D.C., that has represented "the government of Turkey in connection with the development and financing by private sponsors of the Baku-Ceyhan oil pipeline and TransCaspian gas pipeline spanning from the Caspian Sea to the Mediterranean."

During his tenure as Speaker of the House (1999-2006), Hastert pulled an Armenian Genocide resolution from the House floor following a request by then President William Clinton in 2000. A 2005 Vanity Fair article alleged that Hastert received funds from Turkish groups and nationalists, in exchange



Former House Speaker Dennis Hastert

for political favors in Congress. His spokesman at the time denied Hastert had any knowledge of Turkish groups and had done no favors.

## Political Repressions In Armenia Are Continuing

Continued from page 1

ing four-party coalition are equally represented in the body conducting it. "This is what the authorities don't accept," he said. "We therefore consider the formation of this commission an imitation process that will rather cover up the events of March 1 than shed light on them."

Ter-Petrosian's demands were backed by Zharangutyun parliamentarians. One of them, Vartan Khachatryan, said that the investigative commission will enjoy the "highest degree of public confidence" only if it consists of "two equal sections." Still, Khachatryan and other Zharangutyun deputies stopped short of ruling out their faction's participation in the commission's work.

## Professor Richard Hovannisian Honored In Yerevan

Professor Richard G. Hovannisian, AEF Chair in Modern Armenian History at UCLA, was honored by the Armenian National Academy of Sciences in a book launch ("shnorhandes") that coincided with celebrations of the 90th anniversary of the heroic battles of May 1918 and the founding of the Republic of Armenia.

### Sardarabad Conference

In Armenia for two weeks in May, Hovannisian was a plenary speaker at a two-day conference (May 16-17) at the Sardarabad Memorial Park and Museum on the occasion of the battles in May 1918 which made



Richard Hovannisian during Sardarabad Conference

possible the establishment of a small republic around Yerevan, the re-creation of Armenian statehood for the first time in more than five centuries, and the formation of a nucleus around which it was hoped a free, independent, and united Armenian homeland would emerge.

In his presentation, Hovannisian reflected on the battles of Sardarabad, Bash-Abaran, and Karakilisa, as well as certain aspects of the history of the Armenian republic which require further examination. During the conference, he was interviewed by Nune Aleksanian of the state television H-1 and by *Zinuzh*, a program prepared by and intended for the Armenian armed forces.

### Academy of Sciences "Shorhandes"

On May 20, Hovannisian was honored in the Presidium of the Armenian Academy of Sciences on the occasion of the publication of the Russian translation of 16 chapters dealing with international relations from his four-volume *The Republic of Armenia* series. This was the culmination of ten years of labor by the initial translator, Gayane Makhmourian, refined by the

meticulous editing of Vartiter Kotcholosian Hovannisian. The overflow gathering was welcomed by President of the Academy, Radik Martirosyan, followed by an effective analysis of the work by History Institute Director Ashot Melkonyan, anecdotes about Hovannisian's research and interactions in Yerevan during the Soviet era by the Academy's Vice President for Armenian Studies, Volodiia Barkhudaryan, and words of commendation by researcher Rem Khazanchyan, Chair of Armenian Studies at Yerevan State University Babgen Harutunyan Ambassador of Ukraine Oleksandr Bozhko, Prelate of the Atrbadakan Diocese (Tabriz) Bishop Nshan Topouzian, Archbishop Navasard Kchoyan of the Ararat Diocese (representing His Holiness Garegin II), and Raffi K Hovannisian, head of the Heritage faction of the National Assembly and founding director of the Armenian Center for National and International Studies (ACNIS).

Joining the many scholars and public figures in attendance were representatives of Georgia, Bulgaria, the



Richard and Raffi Hovannisian

United States, and the European Union, members of the Armenian National Assembly, including education and science committee chair Hranush Hakobian, President of the Writers' Union, Levon Ananyan, and longtime friend Vahak Hovnanian. In his response, Professor Hovannisian reflected on the significance of the Armenian republic and the lessons to be learned from the experiences of 1914-1921. He emphasized the importance of making Armenian history and issues known to non-Armenian scholars, officials, and public through publications such as this 900-page volume in Russian (*Mezhdunarodnye otnosheniia Respubliki Armeniia, 1918-1922 gg.*). The "shnorhandes" received extensive television and radio coverage.

## Armenia's Ombudsman Defends His Report

Continued from page 1

swers to questions of public concern have not been received in any case. "It remains unclear who gave the order to use force. I would not believe that law-enforcers had spontaneously gathered and decided to conduct an operation. And we are being accused of asking this question."

The ombudsman's report also contained criticism of Robert Kocharyan, the outgoing president as of March 1-2. In particular, it said that "the president-

elect [Serzh Sargsyan] and the emerging system of power received a very heavy legacy from the predecessor."

During the hearings that lasted for several hours, ex-Minister of Justice David Harutyunyan (no relation to the Ombudsman), currently an MP representing the governing Republican Party of Armenia, inquired from the prosecutor-general: "Wasn't there a single question in the ombudsman's report on which you could give explanations and not simply raise objections?"

## Life And Death Of Monte Melkonian

By Toros Sarian

Thousands of people died during the Liberation struggle in Mountainous Karabakh. The enemy troops had occupied and controlled up to 60 per cent of Mountainous Karabakh. Fighters from Armenia and from the Diaspora fought side by side with the Armenians living in Mountainous Karabakh against the well-armed Azerbaijani forces. The decisive turnaround in the war occurred with the Shushi-Lachin operation in May 1992. One of the fighters from the Diaspora was Monte Melkonian. He was killed on 12<sup>th</sup> June 1993 in action in Mountainous Karabakh. Who was this man who even before his death had become a legendary Freedom Fighter?

Monte was born on 25<sup>th</sup> November 1957 in California. His forefathers came from West Armenia. Especially after the massacres under the rule of Abdul Hamid, Armenians fled to USA and a few started new lives in Fresno. In 1970 Montes parents travelled with their children through Europe, including Turkey. Going back to the home of his ancestors and talking with the Armenians still living there left a deep impression on Monte. At the age of 15, Monte went on a School Exchange to Japan. There he not only learned Japanese but also Martial Arts. From Japan he visited on his own other South East Asian countries. In an interview in 1992 Monte emphasized the influence the Vietnamese Liberation War had on developing his own political views.

After returning to California Monte finished High School and began studying Asian History and Archaeology at the University of Berkeley in San Francisco. He organized an exhibition at the University which also dealt with the Genocide of 1915. After the Turkish Consul lodged a complaint the exhibition had to close which led to



protest actions from the students. Monte ended his studies with a paper about the History of Urartu in 1978. Afterwards he went to Iran to work as an English teacher. Later he went on a journey to Iranian Kurdistan with another young Armenians. While he was there he got to know members of the Kurdistan Liberation Movement. At the end of 1978 he went to Beirut. This city had become a centre for the Armenian Revolutionary movement. In early 1980 he joined the "Armenian Secret Army for the Liberation of Armenia" (ASALA) which had been formed in the middle 70's to break the worldwide silence surrounding the Armenian Genocide and to free Turkish occupied Armenia.

Monte was very much involved in the training of ASALA fighters and participated in the preparations for militant actions of the organization. In November 1981 he was arrested in Paris with a false passport, but after numerous bomb attacks in Paris the French Government were forced to release him. Monte's return to Lebanon coincided with the Israeli invasion. He and a group of fighters made their way from South Lebanon on foot to Beirut. Monte and his supporters

were against senseless terrorist attacks. They found it wrong to send patriotic Armenians to their deaths as Suicide Commandos and harming indiscriminately innocent civilians.

It was clear to Monte who used revolutionary freedom movements from all parts of the world as examples to help direct the Armenian liberation movement, that an organization without a clear revolutionary military-political strategy would reduce itself to aimless violence. The growing division within ASALA finally, resulted in its splitting up in 1983. In November 1985 Monte was arrested in Paris carrying a false Passport and a weapon. He was sentenced to six years imprisonment and after serving four years was released and went to South Yemen. From there he travelled around Eastern Europe where the fall of Real-Socialism had already begun. After a while he decided to go to Armenia where he was married in 1991. The Armenians in Mountainous Karabakh and Armenia were in a critical situation at the time as the Azerbaijani forces were not only better armed but also outnumbered the Armenian forces. Consequently, Monte joined the struggle for self-determination. Within a very short period he was able to prove his great military and organizational talents and was given the Command of the troops on the front in South East Front. Here, he was able to quickly organize and train an effective military force using weapons captured from the Azerbaijanis. Under his leadership four thousand Armenian fighters succeeded in defending the area around Martuni.

Monte's units also fought in other parts of Mountainous Karabakh. In April 1993 he was part of the military command which planned and implemented the capture of Kelbadjar. Monte ensured that as few civilians as possible were endangered by the fighting and he called for the surrender of encircled Azerbaijani soldiers and

guaranteed their safe withdrawal. Monte's was not only an excellent military leader. As Socialist he cared for the improvement in the economic and social living conditions of the people. In a land with an entrenched patriarchal social structure he was committed to women's emancipation. He regarded the work of the women behind the lines as important as the role of the fighters on the front. With his modesty, courage and determination he won the hearts of the people in Mountainous Karabakh. Monte was a teacher who tried to show by example how the people could move forward. He gave them courage and hope to overcome their difficult situation.

Monte showed that it is possible to be an intellectual without being elitist and aloof; that one can be a patriot without reverting to primitive Nationalism and Chauvinism; that one can be a soldier without being a militarist. As revolutionary, Monte endeavoured to bridge the contradictions of theory and practice. He disapproved of superficiality and self-importance. Criticism and self-criticism were for Monte essential in order to learn from mistakes. At the age of 36 Monte Melkonian became a martyr and is firmly anchored in the history of the Armenian people. His dream of an independent Armenia where social justice, rule of law and democracy can be taken for granted is not yet reality in present day Armenia. It is the irony of history that the great national hero Antranik Ozanian was prevented from defending Mountainous Karabakh against the Azerbaijani aggression. He was forced into exile and died in 1927 in California; near the place where 32 years later a new hero was born. Monte, a freedom fighter who followed the path of Antranik Ozanian and who fell defending the right for self-determination of Armenians in Mountainous Karabakh.

## Views On Karabakh: Conference Examines The Prospects For Peace

By Naira Hayrumyan  
ArmeniaNow Karabakh

An international conference marking the 20th anniversary of the Karabakh Movement examined both "real" political and "unreal" legal ways of resolving the conflict.

The conference, titled "20th Anniversary of Karabakh Movement: realities and perspectives", attracted 90 participants to Stepanakert in late May from Armenia, Russia, France, the USA, Belgium and other countries.

